Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն
ԱԲ ավագ դպրոցի ընդունելության քննություններ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2026 թ., ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**
Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Պետք է պատասխանել **բոլոր** հարցերին:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է **4** տպագիր էջից:

Առաջադրանք 1. Սիրելի՛ դիմորդ, ստորև ներկայացված է մի հատված Գրիգոր Զոհրապի «Զաբուղոն» նորավեպից։ Կարդա՛ այն և պատասխանի՛ր հարցերին։

Սկիզբները Վասիլիկ երջանիկ եղավ այսպես։ Բախտին չէ՞ր նմաներ քիչ մը այս անտեսանելի սիրահարը որ աշխարհքը կը կողոպտեր զինքը հափրացնելու[1] համար ամեն ճոխություններով։ Օր մը սակայն այս ամենը ծաղրելի թվեցան իր աչքին։ Իր գաղտագողի ու թաքուն երջանկությունը բան մը կը կորսնցներ այսպես ծածուկ մնալով և չկրնալով ուրիշներուն ցուցվիլ[2]։ Երևակայեցեք մեծագին ադամանդ մը որ հավիտյան տուփի մը մեջ փակված մնալու դատապարտված ըլլա ու չկրնաք օր մը կուրծքերնուդ վրա դնելով դիմացիննիդ շլացնել։ Իր բոլոր վայելքները, իր բոլոր ունեցածը այս գոցված ադամանդին տպավորությունը կը թողեին։ Ինքը մանավանդ, ցուցամոլ էակ, չէր կրնար գոհանալ կյանքի այն ներքին ու լռին ներդաշնակությամբը որ ահա իր ձեռքին տակն էր և որ դուրսը արձագանք չէր ձգեր. մարդիկ կան որ դերասաններ են աշխարհիս վրա. իրենց սեփական կյանք ու գոյություն չունին և ուրիշներուն համար կ՝ապրին միայն. հանդիսատեսներ պետք է ասոնցպեսներուն, ու կյանքը հրապույր չունի եթե զիրենք դիտողներ պակսին. դերասաններ՝ որ հանձն չեն կրնար առնել թափուր սրահի մը առջև ներկայացում տալու։ Այսպես էր Վասիլիկ. իր մեկուսացումը՝ լքում կը նշանակեր։ Ոչ ոք իր երեսը կը նայեր փողոց ելած ատեն. գեղին բոլոր երիտասարդները իր հրապույրներեն կը դողային։ Հիմա պչրանքի արվեստը կը փորձեր անոնց դեմ, թույլ ու երերուն քալվածք մը առած էր, որ նուրբ մարմինին ամեն խաղերը կը մատներ, և այսպես ցանկության տաք հով մը կը տարածեր շուրջը ու օձի նայվածք մը՝ որուն հանդիպողը կը կախարդվեր։ Օր մը տղուն մեկը կապվեցավ անոր ու հետը ամուսնանալ առաջարկեց. այն վայրկյանեն գողի սերը անտանելի լուծ մը դարձավ իրեն։ Ալ չկրցավ սպասել անոր, գիշերները լուսցնել, ժամադրություններուն գտնվիլ, սա պարտեզին մեջ, կամ ան լերան վրա. ամեն առթիվ գանգատեցավ, բողոքեց, ու լացավ. մյուսը կը զարմանար. ինչո՞ւ այս արցունքը, չէ՞ մի որ առաջվան պես կը սիրեին իրար. ի՞նչ փույթ մնացածը. Զաբուղոն իր առանձնացած կյանքովը, միամիտ մարդու հատուկ անձալք գաղափարները կը պարզեր։

- Ի՞նչ պիտի ըլլա ասոր վերջը, - կը հարցներ աղջիկը։ Ասոր վե՞րջը. Զաբուղոն երբեք չէր խորհած ատոր. ընդհակառակը կը փափագեր որ վերջը չգա։ Այն ատեն հուսահատած՝ հոժարությամբ բաժանում ձեռք բերելե այս նշանտուքեն[3], որ օրհնված պսակե ավելի ամուր ու հաստատ կ՝երևար, դիվային խորհուրդ մը անցավ մտքեն. գիշեր մը ոստիկանները կանչեց ու ձերբակալել տվավ Զաբուղոնը։

---

[1] հափրացնել - հագեցնել, երես տալ, շփացնել
[2] ցուցվիլ - ցույց տրվել, ի ցույց դրվել
[3] նշանտուք - նշանդրեք, նշանադրություն

Հարց 1. Նշի՛ր երկու փաստ, որ գիտես Գրիգոր Զոհրապի մասին:
Ընդունելի է արևմտահայ արձակագիր լինելու հիշատակությունից մինչև գրողի կյանքին ու գործունեությանն առնչվող ցանկացած փաստ:

(2 միավոր)

Հարց 2. Թվարկի՛ր Գր. Զոհրապի հրատարակած նորավեպերի երեք ժողովածուների վերնագրերը:
Գ.Զոհրապի նորավեպերի երեք ժողովածուներն են՝ «Խղճմտանքի ձայներ», «Կյանքը ինչպես որ է», «Լուռ ցավեր»:

(1.5 միավոր)

Հարց 3. Բացատրի՛ր, թե Գր. Զոհրապի այդ ժողովածուների վերնագրերը ինչպես են հուշում հեղինակի կիրառած գրական մեթոդը, ուղղությունը և ինչպես են արտացոլում նրա նորավեպերի թեմատիկ-բովանդակային հիմնական հատկանիշները:
Գ.Զոհրապը իրապաշտ հեղինակ էր (ռեալիզմի հետևորդ): Նրա ժողովածուներից հատկապես երկրորդը՝ «Կյանքը ինչպես որ է» հենց իրապաշտության (ռեալիզմի) հիմնական սկզբունքներից մեկի ձևակերպումն է (1 միավոր): Երեք ժողովածուներն էլ արտացոլում են իրական կյանքի ցավերը, ընթերցողի մեջ արթնացնում խղճմտանքի ձայներ, երբ նորավեպերում տեսնում է այն տխուր, ցավալի կյանքը, որը պատկերված է ճշմարտացիորեն (1.5 միավոր):

(2.5 միավոր)

Հարց 4. Բնութագրի՛ր նորավեպը՝ որպես գրական ժանր:
Նորավեպը արձակ, փոքրածավալ ստեղծագործություն է, որն աչքի է ընկնում դեպքերի սեղմ նկարագրությամբ, քիչ թվով կերպարներով, արագ, առանց շեղումների զարգացող գործողություններով, միջավայրի, կերպարների հոգեվիճակի սեղմ նկարագրություններով և անսպասելի ավարտով:

(2 միավոր)

Հարց 5. Նորավեպում, մասնավորապես տրված հատվածում Գր. Զոհրապը ներկայացրել է այն հանգամանքները, դրդապատճառները, որոնք կարող էին Վասիլիկին մղել փոխելու իր վերաբերմունքը իր սիրո հանդեպ ու ի վերջո, մատնելու Զաբուղոնին ոստիկանների ձեռքը: Ներկայացրո՛ւ դրանցից երեքը:
Ազատ շարադրանք, որտեղ դիմորդը կարող է նշել կա՛մ հատվածից վերցված մեջբերումներ, կա՛մ բնագրից: Օրինակ՝ Վասիլիկի ցուցամոլությունը, հեղինակի նուրբ համեմատությունը թանկարժեք ադամանդ ունեցողի հետ, հերոսուհու դերասանական էությունը, իրավիճակի անվերջ ու անժամկետ շարունակվելը, այլ տղամարդկանց մոտ սեթևեթելու գործում հաջողելը, արդյունքում ցերեկային կյանքով ապրող երկրպագուի ի հայտ գալը և այլն:

(3 միավոր)

Հարց 6. 1-2 նախադասությամբ ներկայացրո՛ւ, թե ինչպես է ավարտվում նորավեպը: Արտահայտի՛ր քո վերաբերմունքը Զաբուղոնի որոշման հանդեպ: Մտքերդ շարադրի՛ր 4-5 նախադասությամբ՝ հիմնավորելով քո դիրքորոշումը:
Ազատ շարադրանք, որտեղ պետք է երևան.
ա. Դիմորդի՝ «Զաբուղոն» նորավեպին ծանոթ լինելը (բանտարկությունից հետո դժվարությամբ փախչելը, Վասիլիկին այլ տղամարդու ընկերակցությամբ տեսնելը, նախ որոշելը սպանել նրանց, ապա հասկանալը, որ արհամարհանքը վրեժխնդրությունից ավելի ուժեղ է, ու բանտ վերադառնալը) (2.5 միավոր):
բ. Դիմորդի գնահատողական մտքերը «վրեժ» և »արհամարհանք» հասկացությունների ու դրանցից բխած հերոսի գործողությունների վերաբերյալ (2.5 միավոր):

(5 միավոր)

Առաջադրանք 2. Սիրելի՛ դիմորդ, ստորև ներկայացված է Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը «Տաղարան» շարքից: Կարդա՛ այն և պատասխանի՛ր հարցերին:

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման,
Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:
Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում:
Ո՛ւր էլ լինեմ — չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՛մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր —
Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան–յա՛րն եմ սիրում:
Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:

Հարց 1. Թվարկի՛ր Եղիշե Չարենցի հեղինակած ևս երկու ստեղծագործություն՝ բանաստեղծական ժողովածու, պոեմ, վեպ կամ բանաստեղծություն:
Դիմորդը պետք է ծանոթ լինի Ե.Չարենցի «Ծիածան», «Էպիքական լուսաբաց», «Գիրք ճանապարհի» ժողովածուների, «Երկիր Նաիրի» վեպի, «Դանթեական առասպել», «Ամբոխները խելագարված» ,«Նավզիկե» պոեմների, «Տաղ անձնական» և այլ բանաստեղծությունների վերնագրերին:

(2 միավոր)

Հարց 2. Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր երկու բառ, որոնք մեր պատմական երկարատև ճանապարհի մասին են վկայում:
Հին, նաիրյան, հնամյա, հազարամյա, երկաթագիր:

(2 միավոր)

Հարց 3. Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր ***համեմատություն, մակդիր, փոխաբերություն*** պատկերավորման միջոցներից մեկական օրինակ՝ յուրաքանչյուրի կողքին նշելով տեսակը:
Նարեկացու, Քուչակի պես, Արարատի նման, ինչպես փառքի ճամփա - համեմատություն
լուսե լիճ, **անհյուրընկալ** պատեր - մակդիր (կան նաև այլ օրինակներ)
սուր սիրտս խոցեն վերքերը, աշխարհ անցիր - փոխաբերություն (կան նաև այլ օրինակներ)

(3 միավոր)

Հարց 4. Բանաստեղծության մեջ հայ ո՞ր մեծերն են հիշատակվում: Նրանցից մեկի կյանքի և/կամ ստեղծագործությունների մասին ներկայացրո՛ւ քո գիտելիքները 3-4 նախադասությամբ:
Բանաստեղծության վերջին տան մեջ հիշատակվում են Գրիգոր Նարեկացու և Նահապետ Քուչակի անունները (1 միավոր):
Նրանցից մեկի կյանքի և/կամ ստեղծագործությունների մասին համառոտ տեղեկության ներկայացում (2 միավոր)

(3 միավոր)

Հարց 5. Կառուցվածքային-տաղաչափական ի՞նչ հատկանիշներ են հատուկ այս բանաստեղծությանը: Նշի՛ր դրանցից երեքը:
Դիմորդը կարող է նշել տների քանակը, տողերի հանգավորումը, բառակրկնությունները (չկա, սիրում եմ, իմ, մեր), **սիրում եմ** բառի կրկնությամբ տաղի կառուցվածք ձեռք բերելը, յուրաքանչյուր տողում 16 վանկի առկայությունը, տողերում վանկերի ներքին 8/8 բաժանումը և այլն:

(3 միավոր)

Հարց 6. Մեկնաբանի՛ր, թե մի կողմից «**սիրում եմ»** կրկնվող բառը, մյուս կողմից փոփոխվող սիրո առարկաները ինչպես են ձևավորում բանաստեղծության ասելիքը: Բովանդակային ի՞նչ փոփոխություններ ես նկատում տնից տուն: Մտքերդ շարադրի՛ր 3-4 նախադասությամբ:

Ազատ շարադրանք, որտեղ դիմորդը կարող է անդրադառնալ մշակույթ-բնություն-պատմություն կապի դրսևորմանը (բառ, լար, պար, երգեր-երկինք, ջրեր, բուք, լիճ-վերքեր, երկաթագիր գրքեր) կամ նշել սիրելը Հայաստանի ոչ միայն հոգևոր հարստություններն ու նյութական գեղեցկությունները (բառ, պար, լիճ, Նարեկացի, Արարատ), այլև ցավն ու թափած արյունը (մթում կորած խրճիթներ, ողբանվագ լար, արյունաքամ վերքեր): Հնարավոր է նաև քննական այլ պատասխան, որը կհամապատասխանի բանաստեղծության զարգացման տրամաբանությանը:

(3 միավոր)